

նէին վկայութեամբը : — Խուսաց օրէնքն ալ
նոյնպէս կպահանջէ 72 ժամ՝ սպասել :

Եւրոպացւոց մէջ այս ամենայն զգուշութիւններով հանդերձ անպակաս կդանուին ողջ ողջ թաղուած կամ թաղուելու մեռելներ . հապա ինչ ըսելու է այժմու արեւելեան ազգաց համար որ բարբարոսական սովորութիւն մը ըրած են՝ մեռելլ նոյն օրը ,

նոյն իրիկունը գերեզման իջեցընելլ : Ինչ ըսելու է՝ եթէ ոչ աղաչել պազատիլ մեռելի տէրերուն որ ետ կենան այս անդութ սովորութենէն , եւ մանաւանդ տէրութիւններէն ու եկեղեցական իշխանութիւններէն խնդրել որ այս բանիս համար հաստատուն եւ խիստ օրէնքներ դնեն՝ ըստ օրինակի եւ բոպական լուսաւորեալ տէրութեանց :

ԱՌԱԿ

Ա Ս Պ .

Տաքէ չորութենէ էրած մըրկած երկիր մը կար .

Մեծատարած ամպ մը եկաւ

Վըրան կեցաւ ,

Բայց ինչ օգուտ , կաթիլ մը ջուր չէր իտար .

Հապա գընաց ծովը թափեց առատ անձրեւ
եւ ըսկըսաւ մեծ մեծ խօսիլ լեռան առջեւ :

Լեռն ինչ ըսաւ պարծենկոտին պատասխան .

— Էրած բարիքդ ինչ որ կըպարծենաս դու վըրան .

Իսկ իմ , կուզես նէ հաւտա ,

Վըրադ խըզճալլս կուգայ .

Թէ դուն անձրեւըդ տայիր

Այն արտերուն դաշտերուն ,

Սովէ խալսած կըլլայիր

Այնքան մարդ ու անասուն .

Իսկ ծովը ջըրի համար

Քեզի կարօտ չէ՝ եղբայր :

ՔՈՒԱՐԱԳ .

